# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-26/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

« 20 » ապրիլի 2026թ.

ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Աստրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ)

*հանձնաժողովի անդամներ՝*

**Նորայր Աղամալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/գնահատման աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ)

**Կարապետ Պետրոսյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ-շինարար (գնման պատասխանատու/գնահատման աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ)

**Կարեն Կարապետյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ-տնտեսագետ (գնման պատասխանատու/բացման աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ)

**Վարդան Կարապետյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ-շինարար (գնման պատասխանատու/բացման աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ)

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Աիդա Հովհաննիսյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ)

1. **Տեղեկություն՝ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-26/01» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին**

Հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ 2026թ. ապրիլի 20-ին, ժամը 12:00-ին:

2. **Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք աշխատանքների գնման գների վերաբերյալ**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հայտարարեց, որ գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա, և որ գնման հայտով սահմանված է շենքերի,

շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գները (կնքվելիք պայմանագրի (պայմանագրերի) առավելագույն գները).

| Չափաբաժնի համարը | Չափաբաժնի անվանումը | Գնման հայտով սահմանված՝ աշխատանքների ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը (կնքվելիք պայմանագրի առավելագույն գինը) (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ /Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարչական շենքերի ընթացիկ նորոգման աշխատանքներ/ | 80 000 000 |
| 2 | Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ /Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարչական շենքերի ընթացիկ նորոգման աշխատանքներ/ | 80 000 000 |

**3. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ**

Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով, հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Մասնակցի անվանումը (անունը) | Մասնակցի գործունեության հասցեն |
|---|---|
| «ԱՎԱԳ-ՇԻՆ» ՍՊԸ | ք. Հրազդան, Քաղսի 4թղմ. 88 |
| «Արեգ շին» ՍՊԸ | ք. Երևան, Նոր Նորքի 7-րդ զանգված 22շ. 24բն. |
| «Պրոմնաբ» ՍՊԸ/«Պրոֆնաբ» ՍՊԸ | ք. Գավառ, Սարինգուլյան 26 |

Ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

**4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից, հիմնավորումներ ներկայացնելու մասին**

Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

**5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

Հանձնաժողովը որոշեց մասնակիցների կողմից ներկայացված հայտերի ուսումնասիրության նպատակով նիստը հետաձգել և հաջորդ նիստը հրավիրել 2026թ. ապրիլի 23-ին՝ ժամը 12:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ _______________ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

_______________ Նորայր Աղամալյան

_______________ Կարապետ Պետրոսյան

_______________ Կարեն Կարապետյան

_______________ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ _______________ Աիդա Հովհաննիսյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-26/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

« 23 » ապրիլի 2026թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Ասատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ)

*հանձնաժողովի անդամներ՝*

**Նորայր Աղամալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/գնահատման աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ)

**Կարապետ Պետրոսյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ-շինարար (գնման պատասխանատու/գնահատման աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ)

**Կարեն Կարապետյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ-տնտեսագետ (գնման պատասխանատու/բացման աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ)

**Վարդան Կարապետյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ-շինարար (գնման պատասխանատու/բացման աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ)

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Աիդա Հովհաննիսյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ)

1. **Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-26/01» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**

«ԱՎԱԳ-ՇԻՆ» ՍՊԸ-ի, «Արեգ շին» ՍՊԸ-ի և «Պրոնաբ» ՍՊԸ-ի/«Պրոֆսնաբ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

2. **Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**

**2.1 «ԱՎԱԳ-ՇԻՆ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում առկա.

- դիմում հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,

- գնային առաջարկը (Հավելված 2) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,

- ավելացված արժեքի հարկ վճարող հանդիսանալու/չհանդիսանալու վերաբերյալ հայտարարությունը (Հավելված 2.1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,

- հայտի ապահովումը՝ ներկայացված բանկային երաշխիքի (Հավելված 3) ձևով, կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար:

**2.2 «Արեգ շին» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում առկա.

- դիմում հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,

- գնային առաջարկը (Հավելված 2) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,

- ավելացված արժեքի հարկ վճարող հանդիսանալու/չհանդիսանալու վերաբերյալ հայտարարությունը (Հավելված 2.1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,

- հայտի ապահովումները՝ ներկայացված բանկային երաշխիքների (Հավելված 3) ձևով, կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում են բավարար:

**2.3 «Պրոսնաբ» ՍՊԸ-ի/«Պրոֆսնաբ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում առկա.

- դիմում հայտարարությունում (Հավելված 1), գնային առաջարկում (Հավելված 2), ավելացված արժեքի հարկ վճարող հանդիսանալու/չհանդիսանալու վերաբերյալ հայտարարությունում (Հավելված 2.1) և բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման մեջ (Հավելված 3) «մասնակցի անվանումը» դաշտերում նշված մասնակցի անվանումների միջև առկա է անհամապատասխանություն:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշեց մերժել «Պրոսնաբ» ՍՊԸ-ի/«Պրոֆսնաբ» ՍՊԸ-ի հայտը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

### 3. Տեղեկատվություն մասնակիցների առաջարկած տոկոսների վերաբերյալ

Մասնակիցների առաջարկած տոկոսներն են.

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | Մասնակցի անվանումը (անունը) | Տոկոս (%) |
|---|---|---|---|
| 1 | շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ /Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարչական շենքերի ընթացիկ նորոգման աշխատանքներ/ | «ԱՎԱԳ-ՇԻՆ» ՍՊԸ | 90.4 |
| | | «Արեգ շին» ՍՊԸ | 93 |
| 2 | շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ /Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարչական շենքերի ընթացիկ նորոգման աշխատանքներ/ | «Արեգ շին» ՍՊԸ | 93 |
| | | «Պրոսնաբ» ՍՊԸ/«Պրոֆսնաբ» ՍՊԸ | 95 |

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**4. Տվյալներ՝ ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ**

Ղեկավարվելով ՀՀ օրենսդրության պահանջներով՝ **հանձնաժողովը որոշեց.**

- 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել /հայտարարել/ «ԱՎԱԳ-ՇԻՆ» ՍՊԸ-ին, իսկ ընտրված չճանաչված մասնակից հայտարարել «Արեգ շին» ՍՊԸ-ին:
- 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել /հայտարարել/ «Արեգ շին» ՍՊԸ-ին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովը որոշեց.**

- հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին տեքստը,
- գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, իրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանգրեր:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի Նախագահ՝ ________________ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

________________ Նորայր Աղամալյան

________________ Կարապետ Պետրոսյան

________________ Կարեն Կարապետյան

________________ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ ________________ Աիդա Հովհաննիսյան